

„ԳԱՌՈՒՐ“-ԻՑ

ԲԱՅՐԸՆԻ. Թարգմ. անգլիերէնից Յովսէփ Միրզայեանցի

Ո՛վ հայրենիքդ արիների անմոռաց,
Որոնց հողը զաշտից մինչև լեռնանձաւ
Տունն ազադի կամ գերեզմանն էր փառաց.
Ո՛վ շիրիմդ հօրների, և իրաւ
Այս է միայն քեզնից նշան մնացած:
Մօտիցիր զու սպորաքարչ, երկչոր դերի.
Խոստովանելի — չէ սա արդեօք Թերմոպլէն:
Ո՛հ սպրնէկ շառաիղդդ ազադների,
Այս ջրերը, որ չորս կողմէ ծփում են,
Պարասխան դուր, որ ամեն է այս, որ ծովակ.
Սալամիսի ծովախորշը և Խարակ!
Այս աշխարհին — փառքով յայցնի ամենից —
Ուրքի ելիր, և Կէր դարձիր վերստին.
Խլիր մի կայծ քո հայրերի անիւնից,
Մի կայծ նոցա նախկին հուրի առնային.
Եւ կը բարդէ, ով որ ընկնի այդ կռում,
Նոցա անւան մի նոր անուն ահաւոր,
Որ բռնութեան սարսափ ազդէ ու սոսկում.
Նա կը թողնէ մի յոյս, հուշակ փառաւոր,
Որ իւր որդիք մեռնել կ'ընտրեն առաւել
Քան ապրելով այդ համբաւը ազարտել
Քանզի կոխն ազադութեան երբ ծաղի,
Նահապատիւ հօրից անցնի զաւակին,

Քէլէ յաճախ յաղթահարւի, սալթաքի,
 Կ'արժանանայ միշտ յաղթութեան պատկին:
 Անմահ էջը քո հնաւանդ պատմութեան
 Այս է խօսում, վկայ եղի՛ր Յունաստան!
 Մէնդեոն ֆայսրեր, փոշու ներքե մոռացած՝
 Սեղ թողած են բուրգեր առանց անունի,
 Քո հերոսներ—թէն աղէպն ընդհանուր
 Խորհրդած է կոթողն իրենց զամբանի—
 ժառանգած են հղօրադոյն յուշարձան՝
 Հսկայ լեռներն իրանց երկրի հայրական:
 Այնպեղ մուսադ ցոյց է սալիս օրարին
 Շիրինն նոցա, որոնք մեանել չեն կարող:
 Պարմէն երկար պիտի լինէր, սիրազին
 Փառքից անկում, իւրաքանչիւր քաջափոխ:
 Բաւական է—ոչ մի ոսոխ արգաթին,
 Մինչև որ նախ քո բարձունքից դու չընկար:
 Չունէր ուժը նաճելու քո հողին:
 Այո՛, հարթեց ինքնանկումը ճանտապարհ
 Պէտքի անարգ շղթաները գերութեան,
 Պէտքի լուծը աշխարհաւեր բռնութեան: